

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի, 2020 N 24

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՐԹԱՇԵՆ, ՔՅՈՒՐԱԹԱՂ,
ԱԿՆԱՂՔՅՈՒՐ ԵՎ ՈՒԽՏԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Հարթաշեն, Քյուրաթաղ, Ակնաղբյուր և Ուխտաձոր համայնքներում կիրառել հետևյալ սահմանափակումները.

1) Սահմանել Հադրութի շրջանի Հարթաշեն, Քյուրաթաղ, Ակնաղբյուր և Ուխտաձոր համայնքների վարչական սահմանները ներառող ընդհանուր տարածք մուտք գործելու և ելք կատարելու հատուկ ռեժիմ՝ արգելելով անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության ապրանքների, պարագաների, սննդամթերքի, դեղորայքի, վառելիքի մատակարարման նպատակով անձանց տեղաշարժի և Պարետի ցուցումով՝ բացառիկ այլ դեպքերի.

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված Հարթաշեն, Քյուրաթաղ, Ակնաղբյուր և Ուխտաձոր համայնքների վարչական սահմանները ներառող ընդհանուր տարածք մուտք գործելու սահմանափակման համար բացառություն սահմանել մինչև 2020 թվականի հունիսի 12-ը՝ ժամը 12:00-ն՝ թույլատրելով Հարթաշեն, Քյուրաթաղ, Ակնաղբյուր և Ուխտաձոր համայնքներում մշտական բնակության իրավունք ունեցող կամ փաստացի բնակվող անձանց մուտքը.

3) Հատուկ ռեժիմի իրականացումն ապահովելու նպատակով ԱՀ ոստիկանության կողմից սահմանված վայրում տեղադրել հատուկ անցակետեր՝ անձանց ու տրանսպորտային միջոցների շարժը վերահսկելու նպատակով.

2. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

3. ԱՀ ոստիկանության պետին՝ երկօրյա պարբերականությամբ Պարետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ:

4. ԱՀ առողջապահության նախարարին, ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին, ԱՀ Հադրութի շրջանի վարչակազմի ղեկավարին, ԱՀ Հադրութի շրջանի Հարթաշեն, Քյուրաթաղ, Ակնաղբյուր և Ուխտաձոր համայնքների ղեկավարներին՝ օժանդակել ԱՀ ոստիկանության՝ սույն որոշմամբ սահմանված գործառույթների կատարմանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին:


 Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ